# Աննա Սարգսյան

## Դարի գինը

Խաչը մեջքին կրե՞լն է հեշտ,
թե՞ հենց սրտում, ի՞նչ ես կարծում,
ո՛վ անմիտ մարդ,
Կրակի մեջ այրվե՞լն է հեշտ,
թե՞ հոգուդ մեջ հրդեհ դարձած՝
այն բյուր անմեղ հոգիների կորուստի
ցավ կրելը, ո՛վ անմիտ մարդ:
Ծնկի եկած մոր ճչացող լռությունը՝
անշնչացած որդու շիրմին,
հոր կորացած մեջքը անզոր, հայացքը սին,
սա՛ է, սա՛ է զարհուրելին, ո՛վ անմիտ մարդ...
Զարհուրելին նաեւ այն է, որ մտազբաղ
պատմագիր են դարձել ոմանք, առանց ,նույնիսկ, գրի արժեքն իմանալու,
առանց գրի սրբությունը, էությունը վերծանելու բուն շնորհի,
առանց իր իսկ տոհմածառի արմատները ճանաչելու:
Պատմագի՛ր են դարձել ոմանք, ու խաչում են պատմությունը, ինչպես խաչին
մեր Տիրոջը ժամանակին ու հենց նրանք ...
Ահա սա՛ է զարհուրելի...
16.02.2024թ.
Դիլիջան